

## ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

### ՏԱԿԱՅԻ ԴԱՇԲԱՇԻ ԿԻՐՋԻ ԱՊԱԿԵ ԿԱՄՈՒՐԶԸ՝ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑԻ ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 14-ին Զվենո Քարթլիի տարածաշրջանի Շալկայի մունիցիպալիտետում կայացավ Դաշբայի կիրճում ապակե կամրջի բացման հանդիսավոր արարողությունը:

Երկրամասում զբոսաշրջության զարգացմանը նպաստող ենթակառուցյի բացմանը ներկա էին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, երկրի կառավարության անդամներ, խորհրդարանի պատգամավորներ, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի եւ հասարակական կազմակերպությունների, լրատվամիջոցների ներկա-



(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

### ՍԱԼՈՍԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ԵՎՐԱՍԻՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՋԵՎՆ ԸՆԳԴԻՄՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԿՍԵ ԶԱՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆ Է՛»



Հունիսի 14-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին հատուկ հրավիրված ճեպասուլիսում հանդես եկավ մի շարք հայտարարություններով:

Նախագահը խոսեց Բրյուսել կատարած այցի, Վրաստանի ղեկավարությանը քննադատող Եվրախորհրդարանի կողմից ընդունած որոշման, Եվրամիության անդամակցության թեկնածուի կարգավիճակի շնորհման շուրջ ձեռնարկված մթնոլորտի շուրջ: Սալոմե Զուրաբիշվիլին նշեց, որ Բրյուսելում «բավական ծանր պատկերի» է առերեսվել, ցավով ընդգծելով, որ մեկ տարի անց Վրաստանը հետընթաց է ապրել առաջադեմ երկրի իր կարգավիճակից: Ըստ նախագահի, առաջին ցավալի դեպքը Եվրախորհրդարանի բանաձեւն է, որտեղ խոսվում է

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

### ԻՐԱԿԼԻ ԿՈՐԲԱԽԻՉԵ. «ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՂՎԱԾ ԵՆ ԵՎՐԱՍԻՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԴԵՄ՝»

«Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախագահ Իրակլի Կորբախիձեն մեկնարանեց Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու՝ հունիսի 14-ի ճեպասուլիսի հայտարարությունները:



Նրա խոսքով, Սալոմե Զուրաբիշվիլու ճեպագրույցն ուղղակի ուղղված էր Վրաստանի կողմից Եվրամիության թեկնածուի կարգավիճակի շնորհելու դեմ:

- Մենք հարկ չհամարեցինք արձագանքել տիկին Սալոմեի հայտարարություններին, այնուամենայնիվ, հարգում ենք Վրաստանի նախագահի սահմանադրական կարգավիճակը եւ, հետեւաբար, շատ հակիրճ կանդիդատներն ենք նրա երեկվա ճեպագ-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ԳՆԱՀԱՏՈՒՄ

### ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ՝ ԴԱՏԱՄԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՄԲ ԵՎՐՈՊԱՅԻ ԳԵՄԴԻՈՆ ԱՐՏՅՈՒՆ ԳՈՍՅԱՆԸ ԹԻՍՎԿԻՅՆԵՐԻ ՀԵՏ՝ ԹԵՄ ՇՈՒԼՈՒԿԻԱՆՈՒ ՄՈՏ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆԸ



Հունիսի 13-ին Վրաստանի մշակույթի, սպորտի եւ երիտասարդության նախարար Թեա Շուլուկիանին, փոխնախարար Սոսո Գիորգաձեն եւ սպորտի ու երիտասարդության դեպարտամենտի ղեկավար Լլեքսանդր Մախուրաձեն հանդիպում ունեցան բռնցքամարտի Վրաստանի հավաքականի անդամների եւ մարզիչների հետ:

Թեա Շուլուկիանին վրաստանցի մարզիկներին շնորհավորեց Եվրոպայի առաջնությանը ձեռք

բերած պատմական հաջողության կապակցությամբ: (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

## ԳՈՐԾԱԴԻՐ

### ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԵՐԵՎԱՆԻ ԵՎՐԱՍԻՈՒԹՅԱՆ ԱՆԳՐԱՍԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է ԴԱՏԵՐԱՉՄՈՎ, ԱՊԱ ՎՐԱՍՏԱՆԸ ԴԱՏԵՐԱՉՄ ՉԻ ՈՒՅՈՒՄ՝»

Հունիսի 13-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախագահությամբ անցկացված կառավարության նիստում վարչապետն անդրադարձավ երկրի առջև ծառայած մի շարք հիմնախնդրային հարցերի:



Նիստում Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, անդրադառնալով Եվրամիության

անդամակցության կարգավիճակի հարցին, հայտարարեց. (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

### ԵՎՐԱՆԱՅՆԱԾՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՄԲ, ՈՒԿՐԱՆԱՅԻՆ ԵՎ ՄՈՒԴՈՎԱՅԻՆ՝ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ, ԻՍԿ ՎՐԱՍՏԱՆԻՆ՝ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՆՈՐ ԴԱՅՄԱՆՆԵՐ

Ցավոք, Եվրահանձնաժողովն այս փուլում չի աջակցում Վրաստանի՝ ԵՄ թեկնածուի կարգավիճակ ստանալուն:

Եվրահանձնաժողովը հանձնարարական է տալիս, ըստ որի, Ուկրաինային եւ Մոլդովային կտրվի թեկնածուի կարգավիճակ, իսկ Վրաստանին՝ Եվրոպական հեռանկար ու պայմաններ, որոնք պետք է կատարվեն մինչեւ թեկնածուի կարգավիճակ ստանալը: Տվյալ որոշման վերաբերյալ հայտարարվեց հունիսի 17-ին Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա Ֆոն Լեյթենի եւ ընդլայնման ու հարեւանության քաղաքա-

կանության հարցերով Եվրահանձնակատար Օլիվեր Կարիեյի կողմից: Եվ սակայն նշեց, որ այդ հարցով վերջնական որոշումը Եվրամիությունը կընդունի հունիսի 24-ին: Նշեց նաեւ, որ թեկնածուի կարգավիճակի շնորհում-չշնորհումը երկու դեպքում է: Կարելի է բերել Լիտվայի օրինակը, երբ 2000-ականների սկզբին թեկնածուի կարգավիճակ չտրվեց, իսկ մեկ տարի անց Լիտվան անդամակցվեց Եվրամիությանը:

## ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

### ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ

Հունիսի 13-ին Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-րդ տարեդարձի առիթով Վրաստանում Հայաստանի դեսպանության կողմից Թբիլիսիի Շոթա Ռուսթավելու անվան պետական ակադեմիական թատրոնում կազմակերպվեց ընդունելություն եւ համերգ Հայաստանի պարի պետական հանույթի մասնակցությամբ:



Միջոցառմանը հրավիրված էին Վրաստանի կառավարության ու պետական այլ գերատեսչությունների ներկայացուցիչներ, խորհրդարանի պատգամավորներ, Վրաստանում հավատարմագրված դեսպաններ, դիվանագիտական կորպուսի եւ

միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, հայ ու վրացի հասարակական-մշակութային գործիչներ, Վրաստանի տարբեր շրջաններից հայ համայնքի անդամներ, այլ հյուրեր: (Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԱՅՑ

# ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԸ ԲԱՔՎՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵՑ «ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ ԶԱՄԱՇԽԱՐՅԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱՎԱՐԳԻՆ» ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՆ

Հունիսի 16-ին Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին Բաքվում մասնակցեց եւ ելույթ ունեցավ «Սպառնալիքներ համաշխարհային աշխարհակարգին» խորագրով 9-րդ գլոբալ գագաթաժողովին: Իր խոսքում նախագահն անդրադարձավ ուկրաինական իրադարձությունների եւ տարածաշրջանային անվտանգության հարցերին:



Այցի շրջանակներում, Վրաստանի նախագահը հանդիպում ունեցավ իր ադրբեջանցի գործընկեր Իլհամ Ալիևի հետ: Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկկողմ բազմաճյուղ հարաբերությունների հեռանկարները, մտքեր փոխանակեցին տարածաշրջանային անվտանգության հարցերով:

Մարկվեցին ուսանողների հիշյալ խմբի ներկայացրած հիմնական պահանջները: Որոշվեց յուրաքանչյուր հարցի համար ստեղծել աշխատանքային խումբ, որտեղ ուսանողները կկարողանան քննարկել ընթացիկ հարցերը:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՏԵՂԾՎԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ ՊԵՏՅԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՊԱՅԱՆՋՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՄԱՐ



Արդեն մեկ շաբաթ է, ինչ Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական լսարանի ուսանողները՝ ի նշան բողոքի, զբաղեցրել են բուհի ռեկտորի առանձնասենյակը:

Ուսանողները բուհի ղեկավարությունից պահանջում են կարգավորել ուսանողական հանրակացարանների հարցը, ապահովել համալսարանի բյուջեի ծախսերի թափանցիկությունը, փոխել ռեկտորի ընտրության կանոններն ու ավարտական քննությունների ձևաչափը:

Մարկվեցին ուսանողների հիշյալ խմբի ներկայացրած հիմնական պահանջները: Որոշվեց յուրաքանչյուր հարցի համար ստեղծել աշխատանքային խումբ, որտեղ ուսանողները կկարողանան քննարկել ընթացիկ հարցերը:

Ինչ վերաբերում է ավարտական քննությունների ձևաչափին, ապա յուրաքանչյուր ֆակուլտետի ղեկավարության հետ համատեղ ընդունած որոշման համաձայն, ավարտական քննությունները մեկնարկում են հունիսի 20-ին 3 քննական կենտրոններում՝ Թբիլիսիում, Քութայիսիում եւ Ախալցխիսիում: Այն դեպքում, երբ ուսանողը օբյեկտիվ հանգամանքների բերումով չի կարող մասնակցել քննական գործընթացին, նրան հնարավորություն է տրվում դիմել իր ֆակուլտետի ղեկավարությանը, որն անհատապես կվերանայի այն եւ, հիմնավորման դեպքում, ուսանողին կառաջարկի հետաձգել ժամկետը:

Հունիսի 15-ին Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի ռեկտորն ու տնօրինությունը հանդիպում ունեցան բողոքի ակցիա իրականացնող ուսանողների հետ:

Հանդիպմանը բանակցային ձևաչափով կետ առ կետ քննարկվեցին:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

## ԴԱՎԻԹ ՆԱՐՄԱՆԻԱ. «ԳԱԶԻ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳՆԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԶԿԱ»

Վրաստանի էներգետիկայի եւ ջրամատակարարման կարգավորման ազգային հանձնաժողովի նախագահ Դավիթ Նարմանիայի խոսքով, բնական գազի եւ էլեկտրաէներգիայի սակագների բարձրացում չի սպասվում:

Դավիթ Նարմանիան նշեց, որ այս տեսանկյունից գազի եւ էլեկտրաէներգիայի սակագները բարձրացնելու պատճառ չկա:

- Կարգավորող հանձնաժողովը սահմանել է թե՛ էլեկտրաէներգիայի, թե՛ բնական գազի սակագները: Մենք այս փուլում չունենք որեւէ տվյալ, որը հիմք կհանդիսանա սակագների բարձրացման համար:

Այսպիսով, մենք պահպանում ենք առկա սպառողական սակագները եւ բնական գազի, եւ էներգետիկայի սեկտորում, եւ այս տեսանկյունից սակագների բարձրացման որեւէ հիմք չկա,- ասաց Դավիթ Նարմանիան:

ՄԱՐԶԱԿԱՆ ԵՆԹԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՅԱՅԱՎ ՆՈՐ ՄԱՐԶԱՊԱԼՏԻ ԲԱՅՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 11-ին Թբիլիսիի Համալսարանի փողոցում անցկացվեց սպորտի նոր պալատի բացման հանդիսավոր արարողությունը, որին մասնակցեցին եւ ելույթ ունեցան Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, Վրաստանի մշակույթի, սպորտի ու երիտասարդության նախարար Թեա Ճուլուկիանին:



Կառավարության ղեկավարն իր խոսքում շնորհակալություն հայտնեց մշակույթի, սպորտի եւ երիտասարդության նախարարությանն ու շինարարական ընկերությանը՝ նշելով, որ ընկերությունը ռեկորդային ժամկետում կառուցել է եզակի համալիր:

Մայիսի «Եվրաբասկետ» Միջալիսի 4-ին կանցկացվի ստուգողական հանդիպում: Եվս մեկ ամսանոցում են ընդգծել, որ



- Ուզում են տեղեկացնել մեր քաղաքացիներին, որ մեր երկիրը պատրաստ է հյուրընկալել սեպտեմբերի 1-ին կայանալիք «Եվրաբասկետ» մրցույթի 1-ին կայանում:

ՈՒՄՍ - ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՈԱԶՄԱԿԱՆ ԶԱՎԱՍԱՐՏՈՒԹՅՈՒՆ. 114-ՐԴ ՕՐ

### ՎԼԱԴԻՄԻՐ ԶԵԼԵՆՍԿԻ. «ՈՐՔԱՆ ՔԻՉ ՕԳՆԵՆ ՄԵՁ, ԱՅՆՔԱՆ ԵՐԿԱՐ ԿՏԵՎԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ»

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին վստահ է, որ ուկրաինացի ազգն ու բանակը կդիմանան ռուսական ագրեսիային, եւ անհրաժեշտ զենքի կորուստն ավելի քիչ կլինի:

- Մենք կդիմանանք այնքան, որքան կպահանջվի: Ավելի խելամիտ կլինի, որ Եվրոպայում բոլորը օգնեն մեզ այս պահին, որպեսզի մենք ստիպված չլինենք ապագայում պաշտպանել այլ ազգերի,- ասաց Զելենսկին:

Ուկրաինայի նախագահի խոսքով, Կիևն իր գործընկերներից պաշտպանության անհրաժեշտ ռեսուրսներից բացի, ոչինչ չի պահանջում:

- Ոմանց համար իմ պահանջը կարող է դիտվել՝ որպես անվերջ կրկնություն, բայց ես ստիպված եմ նորից ու նորից կրկնել՝ մեզ ժամանակակից զենք է պետք: Մեզ աջակցություն է պետք փրկվելու եւ հաղթելու համար: Որքան քիչ լինի մեր գործընկերների օգնությունը, այնքան երկար

կտեւի այս պատերազմը եւ ավելի շատ զոհեր կպահանջի,- ասաց Զելենսկին:

### ՈՒԿՐԱԻՆԱՆ ՊԱՏՐԱՍՏ Ե ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկու խոսքով, Ուկրաինան պատրաստ է բանակցել Ռուսաստանի հետ, եթե Մոսկվան իսկապես ցանկանում է վերջ տալ պատերազմին:

- Մենք ժամանակ չունենք անհիմաստ բանակցությունների համար: Մենք հստակ գիտենք, թե ինչ ենք անում, պատրաստ ենք խոսել միայն այն դեպքում, եթե մյուս կողմը պատրաստ լինի դադարեցնել պատերազմը,- ասաց Վլադիմիր Զելենսկին:

Ավելի վաղ, Ուկրաինայի նախագահի աշխատակազմի ղեկավարի խորհրդական Միխայիլ Պոդոլյակը հայտարարել էր, որ Ուկրաինան եւ Ռուսաստանը անպայման կնստեն բանակցությունների սեղանի շուրջ, չնայած


ո՛չ այսօր եւ ո՛չ ռուսական պայմաններով:

### ԶԱՊՈՐՈԺՅԵՆՈՒՄ ՈՒ ԽԵՐՍՈՆՈՒՄ ՈՒՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐ ԵՆ ԲԱԺԱՆՈՒՄ

Ուկրաինայի ինքնիշխան Ջապորոժյեի եւ Խերսոնի շրջանի օկուպացված տարածքներում ռուսական անձնագրեր են սկսել տրամադրել:

Ռուսական լրատվամիջոցների փոխանցմամբ, Ջապորոժյեի շրջանի «Ռազմաքաղաքացիական վարչակազմի գլխավոր խորհրդի» անդամ Վլադիմիր Ռոգովը հայտնել է, որ ավելի քան 70 հազար բնակիչ է դիմել ռուսական անձնագրեր ստանալու համար:

Ինչպես հայտնում են ռուսական լրատվամիջոցները, Խերսոնի մարզում անձնագրի համար եկել էր 23 բնակիչ: Նրանք թվում տարածաշրջանի օկուպացիոն «ռազմաքաղաքացիական վարչակազմի» ղեկավար Վլադիմիր Սալոնը, ով նախկինում ենթարկվել էր ԵՄ պատժամիջոցների:



ԱՄՆ

### ՆԿԱԶՈՒՄ Ե ԶՈ ԲԱՅՐԵՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Ամերիկացիների կողմից ԱՄՆ-ի նախագահ Ջո Բայդենի քաղաքականությանը հավանություն տալու մակարդակն իջնում է արդեն երեք շաբաթ անընդմեջ՝ կազմելով 39 տոկոս: Reuters գործակալության տվյալներով, 56 տոկոսը հավանություն չի տալիս նախագահի պաշտոնում Բայդենի աշխատանքին:

Ինչպես նշում է գործակալությունը, ԱՄՆ նախագահի քաղաքականությանը հավանություն տալու մակարդակը 50 տոկոսից ցածր է 2021 թվականի օգոստոսից ի վեր:

ԹՈՒՐԻԱ

### ՇՎԵԴԻԱՅԻ ԵՎ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԱՆՊԱՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐՑՈՎ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԶԻ ՓՈԽՎԵԼ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտնեց, որ Անկարայի դիրքորոշումը Շվեդիայի եւ Ֆինլանդիայի՝ ՆԱՏՕ-ին միանալու հարցում չի փոխվել, եւ որ այդ երկրների՝ Դաշինքին անդամակցելու համար պետք է քայլեր ձեռնարկվեն թուրքական կողմի մտահոգությունները փարատելու ուղղությամբ: Նրա խոսքով, Շվեդիան եւ Ֆինլանդիան պետք է դադարեն աջակցել PKK-ին, որից հետո Թուրքիան դեմ չի լինի այդ երկրների՝ ՆԱՏՕ մտնելուն:

ԵՎՐԱՍԻՈՒԹՅՈՒՆ

### ԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԻԴԵՐՆԵՐԸ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ

Ուկրաինային աջակցելու համար Կիևն են ժամանել Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցը, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը եւ Իտալիայի վարչապետ Մարիո Դրագիան:

Եվրոպացի առաջնորդները հանդիպում ունեցան նախագահ Վլադիմիր Զելենսկու հետ՝ քննարկեցին Եվրամիությանն անդամակցելու հարցը:

Նշեց, որ նախօրյակին Կիևում էր գտնվում նաեւ Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա Ֆոն Դեր Լայսենը:

### ԳԱԶԻ ԳԻՆՆ ԱՎԵԼԱՆՈՒՄ Ե

Եվրոպայում գազի բորսայական գները կտրուկ աճել են, երբ «Գազպրոմը» հայտարարեց «Հյուսիսային հոսք» գազատարով մատակարարումների նոր օրական միջեւ 67 միլիոն խորանարդ մետր կրճատման մասին:

Եվրոպայի խոշորագույն TTF կենտրոնի ինդեքսով հուլիսյան ֆյուչերսները բացվել են 1000 խոր.մետրի դիմաց 1069 դոլարով, ինչը 2,4 տոկոսով ավելի է հաշվարկային գինը:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԵՒ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՄԱՐԶԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

ԿԱՅԱՅԱՎ ՆՈՐ ՄԱՐԶԱՊԱՍՏԻ ԲԱՅՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 2-րդ էջում)

մենք պատրաստ ենք հյուրընկալել «Եվրաբասկետը»: Ցանկանում են շնորհակալություն հայտնել մշակույթի եւ սպորտի նախարարությանը, շինարարական ընկերությանը, որը ռեկորդային ժամանակում կարողացավ կառուցել այս արտասովոր, եզակի համալիրը, եւ ուզում

են շնորհավորել մեր հանդիսատեսին, մարզասերներին այսօրվա կապակցությամբ,- ասաց վարչապետը:

Սպորտի նոր պալատի բացման արարողությանը կայացավ բարեգործական համերգ՝ ուկրաինացի եւ վրացի արտիստների մասնակցությամբ:

Նոր մարզապալատը կառուցվել է Վրաստանի կառավարության եւ սպորտի նախարարության ֆինանսական աջակցությամբ, եւ այն 10 000 հանդիսատեսի համար նախատեսված բազմազործառնության տարածք է: Շենքը կառուցված է ժամանակակից չափանիշներով եւ հագեցած է նորագույն տեխնոլոգիաներով: Պալատում կանցկացվեն ինչպես մարզական, այնպես էլ մշակութային միջոցառումներ:

ԳՆԱՅԱՏՈՒՄ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նշենք, որ Հայաստանի մայրաքաղաք Երևանում անցկացված բռնցքամարտի Եվրոպայի առաջնությունում Վրաստանի հավաքականը ունեցավ պատմական լավա-

գույն արդյունք: Մրցաշարում վրաստանցի մարզիկները նվաճեցին երեք ոսկե եւ մեկ արծաթե մեդալ: Մայրցամաքի չեմպիոնի կոչումը նվաճեցին ախալքալաքցի Արտյուր Գոմցյանը (61 կգ քաշային կարգ), Գիորգի Ղուրջի-

տաշվիլին (87 կգ), թբիլիսցիներ Սախիլ Ալախվերդիեյը (48 կգ), իսկ Լաշա Գուրուլին (67 կգ քաշային կարգում) նվաճեց արծաթե մեդալ:

Հատկանշական է, որ ընթացիկ մարզական տարում բավականին հաջող հանդես եկան

նաեւ Վրաստանի մինչեւ 22 տարեկանների եւ երիտասարդական հավաքականները: Նրանք Եվրոպայի առաջնությունում համապատասխանաբար նվաճեցին մեկ ոսկե, մեկ արծաթե, երեք բրոնզե ու երեք ոսկե, մեկ արծաթե, երեք բրոնզե մեդալ:

ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒՄ

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՊԱՇՏՈՆԱՊԵՆ ԲԱՅՎԵՅ ՍԵՐԳՈ ՓԱՐԱԶԱՆՈՎԻ ՓՈՂՈՅԸ



Թբիլիսի հարստացավ իր Մեծ զավակներից մեկի անունը կրող եւս մեկ փողոցով: Մայրաքաղաքի Մթածմինդա թաղամասի Կոտե Մեսխի փողոցի նորանցքը, ուր ծնվել ու մեծացել է Սերգո Փարաջանովը, այսուհետ պաշտոնապես կկրի լեգենդար կինոռեժիսորի անունը:



րունդները մշտապես հիշեն այս հանճարեղ արվեստագետին, ով մեր մայրաքաղաքում է ծնվել, մեծացել, արժեւորեն նրա մեծագույն ավանդը վրացական արվեստի զարգացման գործում: Սերգո Փարաջանովն իր առանձնահատուկ ոճով, բազմերանգությամբ ու արտասովոր մոտեցումներով պատվավոր տեղ է վաստակել համաշխարհային կի-

նոարվեստում: Թբիլիսիի սակրեբուլոն եւ քաղաքապետարանն իրականացնում են հնարավոր Փարաջանովի անունը հավերժացնելու համար: Այսօրվա միջոցառումն ահավասիկ, մեր գործի վառ վկայությունն է:

Անվանումների եւ խորհրդանիշների հանձնաժողովի նախագահ Նինո Վարդուսանիձեն եւս մեկ անգամ փաստեց, որ Թբիլիսի շնորհակալ քաղաք է եւ մշտապես արժանավայել գնահատելու է իր մեծ զավակներին հավերժացնելով ու փառավորելով նրանց անունները:

Արարողությանը ներկա էին սակրեբուլոյի պատգամավորներ Նինո Ռոխաձեն ու Մարիկա Դարչիան, Վրաստանի ժողովրդական նկարիչ Գոգի Ալեքսի-Մեսխիշվիլին, կինոռեժիսոր Գիորգի Արվելաձեն (խոսեց Մաջիներե), հայտնի ֆոտոնկարիչ Յուրի Մեջիտովը, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայրուրյանը, «Վրացահայերի միության» նախագահ Մարի Առաքելյան, Սերգո Փարաջանովի բազմաթիվ թբիլիսցի երկրպագուներ:

ՏԱՐԱԾԱՆԵՐԱՆ

ՍԱՄՑԻՆԵ-ՋԱՎԱԽԵԹՈՒՄ «ՂՐԻՄ ԿՈՆԳՈ» ՏԵՆԴՈՎ ՎԱՐԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԴԵՊԵ

Ինչպես տեղեկացրեց հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի Սամցինե-Ջավախեթի բաժնի պետ Նանո Ջեդզիցիձեն, ներկա դրությամբ «Ղրիմ Կոնգո» տիգրով վարակման դեպքերը երկուսն են՝ մեկը Ադիգեյի Ծախանի, երկրորդը՝ Ախալցխի Մուգարեթի գյուղերում: Ներկա դրությամբ, բժշկների վերահսկողության տակ է երեք կասկածելի հիվանդ:

Նշենք, որ ողջ տարվա ընթացքում տարածաշրջանում հայտնաբերվել է 20 դեպք, որից 9-ը Ախալցխի մունիցիպալիտետում, 6-ը՝ Ադիգեյում եւ 5-ը՝ Ասպինձայում:

ԳԵՆԵՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝ ՆԻՆՈՑԻՆԴԱՅԻ ՍԱԿՐԵԲՈՒԼՈՅՈՒՄ

Արդեն մի քանի տարի է, ինչ Նինոցիմիդայի սակրեբուլոյում գործում է գենդերային խորհուրդ, որի կազմում են սակրեբուլոյի պատգամավորներն ու մունիցիպալիտետի քաղաքապետարանի գենդերային իրավահավասարության եւ զբոսաշրջության ոլորտի աշխատակիցները:

Նինոցիմիդայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Վահան Արոյանի խոսքով, խորհրդի նպատակը մունիցիպալիտետի հասարակական կյանքում կանանց մասնակցության առավելագույն ակտիվացումն է: Սակրեբուլոյի նախագահն ընդգծեց, որ գենդերային խորհրդի առաջարկությամբ մունիցիպալային բյուջեի նախագծում ներառված է նոր հոդված, որի համաձայն, համա-

պատասխան փաստաթղթերի առկայության դեպքում, ընտանեկան բռնության ենթարկվածներին եւ անօթեւան մնացածներին բնակատարածքի վարձակալության նպատակով կհատկացվի որոշակի գումար:

ՍԱՌՆԵՈՒԼԻԻ ՍՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՒՄ ԵՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Մառնեուլիի մունիցիպալիտետի Օփրեթ, Չանախչի, Աղջորփի գյուղերում արագ տեմպերով առաջ են տարվում ճանապարհաշինական աշխատանքներ:

Ինչպես հայտնեց Մառնեուլիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավոր Արսեն Հախվերդյանը, Օփրեթում ասֆալտապատվել է 835 մետր ճանապարհ, որի համար ծախսվել է 350 հազար լարի: Չանախչի գյուղում կասեցվել է ներքին ճանապարհների ասֆալտապատման ծրագիրը, եւ մինչ ճանապարհի նոր ծրագիր կազմվի, կլուծվի խմելու ջրի խնդիրը, որը Չանախչի գյուղում եւս երկար տարիներ ծառայած խնդիրներից է:

- 100 տոննա ծավալով ջրավազան է կառուցվելու, որտեղ 140 մետր խորությունից ջուրը կհանվի, կհավաքվի եւ մոտ 100 ընտանիքի կապահովի խմելու մշտական ջրով,- ընդգծում է պատգամավորը մշելով, որ ջրամատակարարման նախագծի արժեքը կկազմի 700 հազար լարի:

Արսեն Հախվերդյանը հավելեց նաեւ, որ այս պահին արդեն Աղջորփի գյուղում կառուցվում է գյուղի մուտքն ապահովող կամուրջը, սակայն իրականացվե-

լու է նաեւ 1 կմ երկարությամբ ասֆալտեթոնոնե ճանապարհի կառուցում:

- Կամրջի կառուցումը ֆինանսավորվում է Վրաստանի ավտոճանապարհների դեպարտամենտի կողմից, քանի որ այն գլխավոր ճանապարհի մաս է կազմում: Արժեքը մոտավորապես 500 հազար լարի է,- ասաց պատգամավորը եւ շեշտեց, որ ոչ թե վերակառուցվելու է Աղջորփի գյուղ մտնող կամուրջը, որը 12-13-րդ դարերի շինություն է եւ պատմամշակութային կոթող, այլ նրանից 4 մետր հեռավորության վրա լրիվությամբ նոր կամուրջ է կառուցվելու:

ԱՆՑԿԱՑՎԵՑ «ՁԹՈ ՎՅՈՋԻՅՈ» (ԱՐԻ ԾԱԼԿԱ) ՓԱՌԱՏՈՆԸ

Հունիսի 13-ին Ծալկայի մունիցիպալիտետը հյուրընկալեց «Արի Ծալկա» փառատոնը, որն անցկացվում է Եվրամիության կողմից աջակցվող «Սա Ծալկան է» նախագծի շրջանակներում եւ իրականացվում է «CENN» գործընկեր կազմակերպության հետ համատեղ:

Փառատոնին ներկա գտնվեց Քվեմո Քարթլիի տարածաշրջանի նահանգապետ Գիորգի Դիտտուրաշվիլին, փոխնահանգապետ Կախա Կորեթիձեն:

Ծալկայի մունիցիպալիտետի քաղաքապետի առաջին տեղակալ Անգոր Խիմիկաձեն կազմակերպիչներին շնորհակալություն հայտնեց միջոցառման համար եւ ընդգծեց միջոցառման արտակարգ նշանակությունը Ծալկայի մունիցիպալիտետի ժողովրդականացման եւ նոր հնարավորությունների ստեղծման ուղղությամբ:

Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

COVID - 19

515 ՎԱՐԱԿԱՆ ԵՎ 3 ՄԱՐԿԱՆ ԴԵՊԵ՝ ՄԵԿ ՇԱՐԱԹՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Անցած շաբաթվա ընթացքում Վրաստանում գրանցվել է կորոնավիրուսով վարակման 515 նոր դեպք: Առողջացել է 546 մարդ, իսկ 3 բուժառու մահացել է: Այս մասին տեղեկությունը տարածում է Վրաստանի Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնը: Վարակվածների մոտ հիմնականում գերակշռում է օմիկրոնի B.A.2 շտամը:

Մեկ շաբաթվա ընթացքում Վրաստանում 100 հազար 232 թեստավորում է կատարվել: Դրականության ցուցանիշը կազմում է 0,51 տոկոս:

ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՑ ՏՐԱՆՄՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՍԱԿ ԿՐԵԼՆ ԱՅԼԵՎՄ ՊԱՐՏԱԳԻՐ ԶԷ

Հունիսի 20-ից հասարակական տրանսպորտում պաշտպանիչ դիմակ կրելն այլևս պարտադիր չէ: Որոշումն ընդունվել է Վրաստանի կառավարության կողմից՝ առողջապահության նախարարության եւ ոլորտի մասնագետների առաջարկությամբ՝ հաշվի առնելով երկրում տիրող կայուն համավարակային իրավիճակը:

ՎՐԱՍԱՆՈՒՄ ԳՐԱՆՑՎԵՑ «ԿԱՊԻԿԻ ԾԱՂԿԻ» ՎԻՐՈՒՄԻ ԱՌԱՋԻՆ ԴԵՊԵՐԸ

Վրաստանի Հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջապահության ազգային կենտրոնի լաբորատոր հետազոտություններով, Վրաստանում հաստատվել է «Կապիկի ծաղիկ» վիրուսի առաջին դեպքը: «Հիվանդն ունեցել է վիրուսի թեթև ծեւ եւ համապատասխան բուժումից հետո դուրս է գրվել բուժաստատությունից: Ուսումնասիրվել են նաեւ շփումները, եւ ոչ մի դեպքում կլինիկական նշաններ չեն հայտնաբերվել»,- ասված է կենտրոնի տարածած հաղորդագրության մեջ:

ԵՐԿՐԻ ՏԱՐԱԾՔ ՍՈՒՏՔԸ՝ ԱՌԱՅ ԿՈՎԻԴ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿՈՒՄՆԵՐԻ

Վրաստանի կառավարության որոշմամբ, հունիսի 15-ից ցանկացած օտարերկրյա քաղաքացի Վրաստան մուտք գործելիս ազատվում է կորոնավիրուսի բոլոր կարգավորումներից: Նշենք, որ Վրաստանում կորոնավիրուսի հայտնաբերման օրվանից՝ 2020թ. փետրվարի 26-ից, թեստավորման հիման վրա կորոնավիրուս արձանագրվել է 1 658 755 անձի մոտ. COVID-19-ով մահացել է 16 838 մարդ:

ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

ԾԱԼԿԱՅԻ ԴԱՇԲԱՇԻ ԿԻՐՃԻ ԱՊԱԿԵ ԿԱՍՈՒՐՋԸ` ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑԻ ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

յացուցիչներ:

Ինչպես նշեց Իրակլի Ղարիբաշվիլին, կառավարության գլխավոր առաջնահերթություններից է էկոզոոսաշրջության պաշտպանությունը, պահպանումը եւ միեւնոյն ժամանակ հաջող զարգացումը, որի վառ օրինակը Ծալկայի կիրճի եզակի նախագիծն է:

- Այս գեղատեսիլ վայրում` Ծալկայի կիրճում, ստեղծվել է նման արտասովոր ենթակառուց, եւ ես ուզում եմ իմ ելույթն սկսել առաջին հերթին շնորհակալությամբ` 120 մլն լարի ներդրած եւ 250 մոր աշխատատեղ ստեղծած «Կասս Լանդ» ընկերությանը: Շնորհավորում եմ Ծալկային եւ մեր ողջ երկրին: Ուզում եմ նաեւ նշել, որ մեր կառավարության առաջնահերթություններից է մեր բնական ժառանգության պահպանումը եւ, միեւնոյն ժամանակ, էկոզոոսաշրջության միջազգային հաջող զարգացումը, եւ այս արտասովոր, եզակի վայրը վառ օրինակ է, թե ինչպես եղավ միաձուլումը: Մենք ուրախ ենք, որ մեր բարեկամ պետությունը` Իսրայելը եւ հրեական ընկերությունը, հետաքրքրված են այս նախագիծով,- ասաց վարչապետն ու հավելեց, որ կառավարությունն ամեն ինչ անում է բիզնեսը պաշտպանելու համար, որպեսզի գործարարները կարողանան զբաղվել ազատ բիզնեսով:

- Վրաստանը բիզնեսի ծավալով յոթերորդն է: Մեր երկրում ստեղծված ամենաճկուն պայմաններից մեկն ամենաբիջ բյուրոկրատիան է, եւ դա նպաստում է երկրում ներդրումների նման բարձր մակարդակի, որի համար շատ ուրախ ենք: Շնորհակալություն եմ հայտնում նման եզակի նախագիծ իրականացնելու համար: Ես հավատում եմ, որ այս վայրը կսիրվի բազմաթիվ զբոսաշրջիկների կողմից,- ասաց Իրակլի Ղարիբաշվիլին:

Նշենք, որ Ծալկայի Դաշբաշի կիրճում, Խրամ գետի հովտում 2019 թվականին սկսած եւ վերջերս ավարտված 240 մետր երկարության կամրջի շինարարության համար ծախսվել է 120 միլիոն լարի: Հունիսի 15-ից բացված եզակի համալիրի այցելուները կունենան տպավորիչ տեսարան` համայնապատկեր, գեղեցիկ տեսարաններ, դեպի Կասկադային ջրվեժներ տանող արահետներ, այցելուների համար նախատեսված բոթերներ, կամրջից 200 մետր բարձրության վրա կազմակերպված բացառիկ սրճարան:

Ավելացնենք, որ Դաշբաշի տարածք մուտքը վճարովի է: Տոմսի գինը 49 լարի է: Վրաստանի քաղաքացիների համար գործում է 40 տոկոսանոց զեղչ, եւ գինը կազմում է 29 լարի: Մանկական տոմսը (3-12 տարեկան) օտարերկրացիների համար կարծեմա 34, իսկ Վրաստանի քաղաքացիների համար` 19 լարի: Մինչեւ 3 տարեկան երեխաների մուտքն անվճար է:

Վրաստանի քաղաքացիների համար գործում է 40 տոկոսանոց զեղչ, եւ գինը կազմում է 29 լարի: Մանկական տոմսը (3-12 տարեկան) օտարերկրացիների համար կարծեմա 34, իսկ Վրաստանի քաղաքացիների համար` 19 լարի: Մինչեւ 3 տարեկան երեխաների մուտքն անվճար է:



ԴԱՇԲԱՇԻ ԿԻՐՃԻ ԱՊԱԿԵ ԿԱՍՈՒՐՋԸ ԴԱՇԲԱՇԻՆԵՐԻՍ ԶԱՄԱՐ ՆԱԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԶԱՐԿՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է

Ծալկայի մունիցիպալիտետի Դաշբաշի կիրճում ապակե կամրջի բացման կապակցությամբ «Վրաստանը» կապվեց Դաշբաշի տարածքային միավորում Ծալկայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի լիազոր Ռուբեն Խաչատուրովի հետ:

- Մեր ընթերցողների հետաքրքրությունից ելնելով` խնդրում ենք մի քանի խոսք ասել Դաշբաշ գյուղի եւ տեղի բնակիչների մասին:

- Մեր նախնիները գրեթե 200 տարի է, ինչ Հայաստանի Լոռու մարզից տեղափոխվել եւ բնակություն են հաստատել այս գյուղում: Դաշբաշը Ծալկայի շրջկենտրոնից հարավ-արեւմուտք եւ հայկական եկեղեցիներ:

- Ինչո՞ւ է դաշբաշցիներին ձեռնտու կիրճում ապակե կամրջի բացումը: Նոր ենթակառուցված ձեռնտու է մի քանի նկատառումներով: Նախ` արդեն շինարարության ընթացքում տեղում աշխատանք ստացավ շուրջ 30 դաշբաշցի: Հյուրանոցային մյուս ենթակառուցների շահագործումից հետո, մեր գյուղից այդտեղ աշխատողների թիվը, կարծում եմ, կավելանա: Իսկ դա նշանակում է երկարաժամկետ աշխատանք եւ կայուն աշխատավարձ: Բնականաբար, դաշբաշցիներս մեր բաժինը կունենանք նաեւ մեր ենթակառուց այցելող զբոսաշրջիկներին գյուղմթերքներով ապահովելու գործում, ինչը, ես եկամտալի լրացուցիչ աղբյուր է: Կամուրջը եւ կիրճը գտնվում են ընդամենը 150-200 մետր հեռավորության վրա:

Ինչպես տեսնում եք, բոլոր կողմերից մեր ենթակառուցված դաշբաշցիներին համար սոցիալական շատ հարցերի կարգավորման լուրջ հնարավորություն է տալիս,- ավելացրեց Դաշբաշի տարածքային միավորի լիազոր Ռուբեն Խաչատուրովը:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՍԱԼՈՍԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ԵՎՐԱՍԻՈՒՐՅԱԿ ԲԱՆԱՉԵՎՆ ԸՆԴՊԻՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՍԾ ԶԱՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Բիծինա Իվանիշվիլու նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու մասին:

- Նման տեքստը, իր փաստացի անճշտություններով եւ անհիմն պնդումներով, ընդամենը մեկ ցուցիչ է, որ պատշաճ աշխատանք չի տարվել Եվրասիոնիքարանում բանաձեւի մշակման մեջ ներգրավված կողմերի հետ: Ընդդիմությունն իր հերթին աշխատեց նպատակներին հասնելու համար, իշխանությունն էլ լիարժեք չկատարեց իր աշխատանքը,- նշեց Սալոսե Զուրաբիշվիլին եւ հավելեց, որ գործընկերների մոտ հարցեր առաջացրած իշխող թիմի սխալ քայլերն անգործության հետեւանք են: Այս համատեքստում մա նշեց Վրաստանի կառավարության դիրքորոշումն Ուկրաինայի կողմից Ռուսաստանում պատերազմ սկսելու հարցում, իսկ «Երկրորդ ճակատի» թեման անվա-

նեց մտացածին: Նախագահի խոսքով, Արեւմտյան գործընկերների հետ հանդիպումներում «Երկրորդ ճակատի» հարց չի բարձրացվել:

Վրաստանի մասին Եվրասիոնիքարանում ստեղծված սխալ կարծիքի համար նախագահը մեղադրեց իշխող կուսակցությանը:

- Հի կարելի հասարակությանը թյուրիմացություն մեջ զգել, բանաձեւն այս փուլում ընդամենը գրգռվածության արտահայտություն է, դա արմատական ընդդիմության հետեւողական աշխատանքի եւ իշխանության լռության ու անգործության արդյունք է,- հայտարարեց Սալոսե Զուրաբիշվիլին:

Եվրասիոնիքարան քաղաքականության հաստատման նպատակով նախագահը քաղաքացիներին կոչ արեց հունիսի 16-ին Թբիլիսիի Եվրոպայի հրապարակում անցկացնել հանրահավաք:

ԻՐԱԿԼԻ ԿՈՒՐԱՄԻՉԵ. «ՆԱԽԱԳԱՅԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՆ ԵՎՐԱՍԻՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԴԵՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րույցի մի քանի հատվածներին:

Սկսենք ընդհանուր գնահատականից եւ ասենք, որ, ցավոք, Սալոսե Զուրաբիշվիլու երեկվա ճեպագրույցը ուղղակի ուղղված էր Վրաստանի կողմից ԵՄ թեկնածուի կարգավիճակն ընդունելու դեմ:

Սալոսե Զուրաբիշվիլին մի կողմից ասում է, որ արմատական ընդդիմությունը Բրյուսելում գործում էր պետության դեմ, իսկ մյուս կողմից հրապարակավ կրկնում է այն կեղծիքները, որոնց վրա կառուցված է «Ազգային շարժման» եւ նրա արբանյակների հակապետական արշավը:

Նրա խոսքով, Սալոսե Զուրաբիշվիլին խոսեց իշխող կուսակցության եւ Վրաստանի կառավարության այսպես կոչված հակաեվրոպական հռետորաբանության մասին, որը ոչ մի հիմք չունի:

- Եվրոպական խորհրդարանականներ-

րի այն մասը, որը պահանջում է Սալոսե Զուրաբիշվիլու եւ Գվարամիայի ազատ արձակումն ու Բիծինա Իվանիշվիլու նկատմամբ պատժամիջոցների կիրառումը, Եվրոպա չէ: Միաժամանակ հետաքրքիր է, որ Սալոսե Զուրաբիշվիլին երեկ սուր քննադատության է ենթարկել Եվրասիոնիքարանի բանաձեւը: Անհասկանալի է, թե ինչու է Սալոսե Զուրաբիշվիլին մեր արդար քննադատությունն անվանում հակաեվրոպական հռետորաբանություն, երբ անձամբ նա նման լուրջ մեղադրանքներ է ներկայացնում Եվրասիոնիքարանի հասցեին,- ասաց Իրակլի Կոբախիձեն:

Անդրադառնալով Եվրասիոնիքարան կուրսի պաշտպանությանն ուղղված հանրահավաք անցկացնելու կոչին` Իրակլի Կոբախիձեն հայտարարեց, որ Վրաստանի բնակչության 85 տոկոսը աջակցում է Եվրասիոնիքարանը, եւ «վաղվա անպատրաստ ցույցը միայն կստորացնի այդ փաստը»:

ԳՈՐԾԱՐԻՐ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԵԹԵ ԵՎՐԱՍԻՈՒԹՅԱՆ ԱՆՂԱՍԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է ՊԱՏԵՐԱԶՄՈՎ, ԱՊԱ ՎՐԱՍՏԱՆԸ ՊԱՏԵՐԱԶՄ ՉԻ ՈՒՉՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Եթե ԵՄ անդամ թեկնածուի կարգավիճակը որոշվում է պատերազմով, ապա Վրաստանը պատերազմ չի ուզում: Եթե ասում են, որ Ուկրաինան պատերազմում է, ուստի պետք է կարգավիճակ տալ, ու եթե պատերազմն է որոշիչը, ապա, կներեք, մենք պատերազմ չենք ուզում,- հայտարարեց վարչապետն ու հավելեց, որ այդ կարգավիճակը վրաց ժողովուրդը վաստակել է ժողովրդավարության համար 30-ամյա պայքարի եւ վերջին ինը տարիների ընթացքում իրականացրած բարեփոխումների շնորհիվ:

ԵՎՐԱՍԻՈՒՐՅԱԿԱՆ ԸՆԴՊԻՍՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՉԵՎԸ «ՋԱԿԱՎՐԱՑԱԿԱՆ» Է

Անդրադառնալով նախօրյակին Եվրասիոնիքարան

նի կողմից ընդունած բանաձեւին` վարչապետը հայտարարեց, որ Եվրասիոնիքարանի աջակցությամբ եւ հիմք խմբերի նախաձեռնությամբ Վրաստանի վերաբերյալ բանաձեւը «հակավրացական» է ու «հակապետական»:

Վարչապետի խոսքով, եթե ընդդիմադիր «Միասնական ազգային շարժումը» մտահոգ է երկրի ապագայով, ապա պետք է կոչ անեն Եվրոպական ժողովրդական կուսակցությանը չաջակցել բանաձեւին:

Հիշեցնենք, որ Եվրասիոնիքարանի ընդունած բանաձեւի տեքստը կոչ է անում ԵՄ կառույցներին աշխատել Վրաստանին ԵՄ-ի թեկնածուի կարգավիճակ տրամադրելու ուղղությամբ` համաձայն ԵՄ պայմանագրի 49-րդ հոդվածի, արժանիքների հիման վրա եւ պայմանով, որ Վրաստանի կառավարությունը կկատարի բոլոր պահանջները:

ՄԵՆՔ ԵՎՍ ՈՒՆԵՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐՔԻՐ Խոսելով Ռուսաստանի կապակցությամբ Արեւմուտքի կողմից տարվող քաղաքականության մասին` Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ Եվրասիոնիքարանը մինչ օրս առեւտուր է անում Ռուսաստանի հետ:

- Ուզում եմ հիշեցնել, օրինակ, երբ մեր անպատասխանատու ներքաղաքական ընդդիմախոսները մեզ քննադատում էին ինչ-որ բանաձեւերի համար, խոսքը կաթի ու պանրի մասին էր, դրա մասին հազարավոր ցինիկ հայտարարություններ արվեցին, ԵՄ-ն ամեն օր մեկ միլիարդ դոլար է վճարում Ռուսաստանին: Ռուսաստանը պատերազմի սկզբից ստացել է 90 միլիարդ դոլար առևտրի արդյունքում: Մենք ազգային շահեր չունենք, թե` ներքաշվենք պատերազմի մեջ, տարածքներ կորցնենք, պետականությունը կորցնենք: Մենք այդ հարցերը տալիս ենք բացահայտ ու առավել քան բարձր,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին: